

ՄՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՅՕԼԵԿԵՐՏ, ԵՐՈՒԱՆԳԱՇԱՏ, ԵՐՈՒԱՆԳԱ-
ԿԵՐՏ ԵՒ ԲԵՂԱԲԱՆ ՔԱՂԱՔԱՅՆ ՀԱՅԱՍ-
ՏԵՆԻ.

1869 տարւոյս, հոկտեմբեր ամսում՝ պաշտօնա-
կան գործով Աողբ Գիւղաքաղաքն պատահելով,
ցանկացայ և մեր քանի՜ երբեմն յիշատակաց ար-
ժանի քաղաքատեղիքն տեսնել, որ ցայսօր իւրեանց
անուանքն պահել են հազար ու մէկ փոխօրումիւն
և յեղափոխութիւն ժամանակաց և Տէրութեանց
տանալով որք են Երուանդապետ, Յարսկերէն և
Բարսկերէն Գաղաքներն: Աստի և գործաւարտե-
լուց զինի և Աողբայ Աղաճանից դրութիւնն և փոր-
ուածքն և աղահատից աշխատութեանց հանդէս-
ներն տանելով և նրանցով բաւական զբոսնելով, և
եղնակ Աողբացոյ փոքրիկ մատրան տեսութեամբն
միտիմարուելով՝ պատրաստվելիք ու ճանապարհ-
հորհեցիք զեպ ՚ի Երուանդաշատ Գաղաքն, որին
այժմ՝ Պարսկերէն՝ Հաճի-Պարսկէն կանուանեն, և
է զիւղ 75 տուն պարսից, ծառատանօք զարգար-
ուած, և բերդ ու պարսպօք ամրացուցած. ուր
նստին այժմ Արքուեի սահմանապահ զինուորք հան-
դերձ Աստիճանաւորան, և է Ախուրեան գետոյ ա-
րևելեան եզերքումն, որոյ պոյեաց ներքեից Ախու-
րեան գետն, Արքու-Նոյ ճեղքից խառնի Երասխ
գետոյ հետ, և Երասխայ միւս կողմից հանդէպ Եր-
ուանդաշատին նշանաւոր բերդն Երուանդաշատայ,
այժմ՝ Աղբայ անուանեալ, որ մի ընդար-
ձակ քարակտուր բլրի վերայ է, որոյ շինուածոց
դրութիւնն և ամրութիւնն ՚ի ժամանակին՝ կնկա-
րագրէ Մովսէս Խորենացին՝ մեր Ազգի քաջ պատ-
մազիրը՝ յասելն. Երուանդ պարսպէ զբլուրն . . .
զմիջնարկերուն ամրացուցանէր բարձր պարսպօք, և
զրուն պղնձիս կանգնէր ՚ի միջոցի պարսպին և
կրանկիս երկաթիս ՚ի ներքուստ ՚ի վեր մինչև
ցրուոն, և ՚ի նմա, որոգայթս իմն ծածուկս ընդ
մէջ աստիճանացն, որպէս զի՝ ըմբռնեցի, թէ որ
զաղտ կրանկով դաւել կամիցի զԱղբայն, * և այն-
որ և յամի Տեսան 77 փոխադրեց անդ թագաւո-
րական Աթոռն Արմաւիրայ, Երուանդաշատայ
շինուածքն և բերդն բոլորովին փլած, մաշված և

մեծ մասամբ փոշիացած կ'երևէին, թէ ժամանակի
հնութենէն և թէ շատ անգամ պատահած զանա-
զան տիրապետող իշխանութեանց աւերածութիւն-
ներից և փոխօրումիւններից. որոց շինուածոց
հետքն միայն կ'նշմարվէին, և անունն կ' յիշուէր
միայն Հայոց մէջ, և Երասխ գետոյ վերայ շինած
կամրիցի զեռ կանդուն կիսով չափի որմունքն կ'րա-
ցայայտէին արգարև տեսողաց՝ Երուանդայ մեծա-
գործութեանց չափն: Միայն բերդը որ մի բլրոյ տա-
րածված գագաթան վերայ է շինված, այն այն ժա-
մանակին հանգամանայն նայելով՝ բաւական ամրու-
թեան տեղ է բնակողացն համար: Այս տեղ մէկ
նշանաւոր քար կամ արձան չ'կարացիք գտնել,
որից կարողանայինք մակարերել շինուածոց թիւն
ու ժամանակն. միայն այստեղ՝ այնտեղ թափած,
Արմաւիրայ բերդի նման կոփածոյ թանձր քարեր,
որոյ շինութեան ժամանակն թէ և արդէն ամե-
նայն կարողացող Հայերուն յայտնի է Խորենա-
ցոյ Պատմութեան ստորագրութեամբն (Բ. 1. Թ.).
Երուանդաշատից ոչ ինչ բաւականութիւն տա-
նալով տխուր և խոր մտածողութեամբ ընկերակ-
ցացս մանրամասնաբար կ'պատմէի Երուանդայ Թա-
գաւորութեան ժամանակի պանծալի անցքերը, ևս
և միարանութեան օգուտն և անմիարանութեան
վնասն յառաջ կ'երևէի, ինչպէս փորձն և նոյն իսկ
ժամանակաց պատմութիւնքն հանգամանօրէն կը-
նկարագրեն և կ'ապացուցանեն. իսկ ընդ հակառակն
անմիարանութեան ներգործութեամբն քանի՜ հա-
զարաւոր և բիւրաւոր աղէտներ, ցաւեր, և վնաս-
ներ են կրել Աղբային վատաց և արգար իրաւանց
պաշտպան մեծագործ մեր նախնիքն, որ նոյնպէս
մեր Ազգային և ընդհանուր Ազգաց պատմութիւնքն
ցաւօք սրտի կ'զբեն և կ'ողբան որպէս և Հայաս-
տանի նոր Երիմիայն՝ Մովսէս Խորենացին իւր պատ-
մութիւնն ողբալով կ'վերջացնէ, նկարագրելով մեր
Ազգի երևելեաց յայնժամեան դրութիւնն յոտնը.
"Ողբամ զքեզ Հայոց աշխարհ. . . իշխանք ապս-
տամիք, գողակիցք գողոց, յափշտակողք, աշխար-
հաւէրք . . . Դատաւորք կաշառաւորք, անընտ-
րողք իրօտանց, անհաստատք, հակառակողք . . .
Թագաւորք խիստք և չարաչարք: Աստի և հաւատ
վաճառեալ ընդ սնտոի կենցաղոյս և բարձումն առ-
հասարակ յամենեցունց սիրոյ և ամօթոյ": Այս-
պէս առարկութեամբ ճանապարհներս չափելով՝

* Խորեն. Բ. 1. Թ:

վերցնելով զիւրի երկրացին բերքի տասանորդը՝ ոչ սակաւ նեղութեան պատճառ կրկինն որդակելի և անտերունջ Հայազգեացն, որպէս և մեր այն տեղ եղած միջոցին 3 բէշ կամ 1:5:5:7:1 իջեանել էին Տանուտեառն տան մեջ, և կ'պահանջէին ժողովուրդից այգեաց բերոց տասանորդը նոյնպէս և իմացանք որ ճշմարիտ Քրիստոնէի և կատարեալ Հայի նման իրենց հաւատն ու Ազգութիւնն պինդ պահպանելով Ռուսաստանի և Տաճկաստանի մի խոր անկիւնումն, արգարև արժանի են զովութեան և կարեկցութեան:

(Շարունակելի:)

Ա Ղ Գ Ա Յ Ի Ն

Մայր Աթոռոյ Տպարանի՝ օր աւուր առաւել ևս բարեկարգութեան և Ազգօգուտ պայծառութեան ու կառավարութեան համար՝ Վեհափառ Աթոռիկոսը Տպարանական Երկրի մի հաստատեց կարեւոր կանոնադրութեամբ՝ միացնալայն իւրաքանչիւր անդամը պարտաւորելով մէն մի պաշտօն տաննէն նոյն ժողովոյ իրաւանց նմայրկեալ զործոց մէջ:

Ժողովոյ Անդամք և նոցին յատուկ պաշտօնք են՝

Գեր. Գրիգոր Եպիսկոպոս Մուշեղեանց՝
Նախագահ

Արժ. Ներսէս Արղղապետ Խուտալէրտեան՝
Ատենադպիր և Աերակացու Տպարանի և Սուրհանդակական գործոց:

Արժ. Եսայի վարդ. Աստուածատրեան՝
Գանձապետ և Ծախսարար:

Տիրացու Գեորգ աւագ Սարկ. Սուրենեանց՝
Օգնակ. Աերակ. Տպ. և Սուր. գործոց:

Տիր. Ս. Ռ. Մանկունի՝ Տնօրէն ամսագրոյ
(և այլոց):

Պարոն Յովհաննէս Հովուեանց՝ Տօմարակալ:

Չիրքեղահայ պարոնայք Սարգիս Գասպարեան Թամբեանց և Ընտօն Մեկքոնեանց՝ ինչպէս ուխտած էին՝ ամ ըստ ամէ՛ իւրեանց ձիոց կրամակէն իւրաքանչիւրը մէն մի ձի նուիրել յօգուտ Մայր Աթոռոյ, նոյնպէս այս տարի ջ'գմեռանդութեամբ կատարելով իւրեանց բարի ուխտը, առջինը 50 ուրբի, երկրորդը 43 ուրբի՝ երկու ձիոց փոխարէն զինները փութացան ընծայել Մայր Աթոռոյ մերում: Զոր յօրինակ և 'ի յորգոր Ազգայնոց մերոց հրատարակելով, նաև մեր 'ի սրտէ շնորհակալութիւնը պարտք կը համարվիք յայտնել նոյն առիթաւս բարեպաշտ նուիրատուաց՝ հանդերձ զովութեամբ:

Ուրախութեամբ կը լսեմք թէ՛ Պարսկաստանաբնակ սիրելի Ազգայիններէն Վսեմափայլ Ապար Խան ուսումնական և քաղաքագէտ անձը, Փարիզի Պարսկական Գիւսպան ընտրուած է:

Ամսագրոյս ներկայ շրջանի Գ. թուոյն 94 և 95 երեսներուն մէջ տպեալ բարոյական բանաստեղծութիւնը՝ թէպէտ հանգուցեալ Աիմօն Ծ. Արղղապետ Մուշեղեանցի անուամբ հազորպած էր մեզ նորին ազգականներէն մին, բայց Գեր. Թաղեոս Ապիսկոպոս Չիւնական՝ մի Ազգարարութեան հետ 'ի միասին՝ նոյն բանաստեղծութեան՝ իւր մօտ գտնուած բնագիրը խրկելով, որ հրատարակուածէն մի քանի բառերով միայն տարբերութիւն ունի, կը յայտնէ Մուշեղեանցի մտաց ծնունդ չը լինելը և կը յաւելու այսպէս. "ըստ որում 'ի Բաղամ մտաց հետէ կարողաւք բնագիրը նորէն գրանել առ մեզ իբրև նշխար հնոս":